**«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»**
**ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան**
**տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն**
**տնտեսագիտության թեկնածու, դոցենտ**

**_____ Մ.Գ.Մանուչարյան**
**06 հուլիսի 2026թ.**

**ԿԱՐԾԻՔ**
**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

Ալիրեզա Փարվիզ Ադկանիանի «Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության համագործակցության հեռանկարները պարենային անվտանգության կառավարման համակարգում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

***Մասնակցում էին՝*** Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Լիանա Խաչատրյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.*, Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Ալվարդ Մատինյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Հովհաննես Ասատրյան՝ *տնտեսագիտ. թեկնածու:*

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պարենային անվտանգության արդյունավետ կառավարումը առնչվում է ոչ միայն ազգային, այլև վերազգային խնդիրներին, քանի որ այն ուղղակիորեն փոխկապակցվում է ՄԱԿ-ի մինչև 2030 թ. սովին վերջ դնելու, բարելավված սննդի ապահովման և կայուն գյուղատնտեսության խթանման կայուն զարգացման 2-րդ նպատակի հետ, որին հանձնառու են երկրների կառավարությունները և կոնկրետ գործողություններ է ձեռնարկում այն իրագործելու համար: Այս առումով արդիական է համարվում պարենային անվտանգության կառավարումը Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության համագործակցության

շրջանակում: Հատկանշական է, որ այս հարևան երկրներին հատուկ են մի շարք սոցիալ-տնտեսական առանձնահատկություններ, որոնք թույլ են տալիս կառուցելու պարենային անվտանգության կառավարման միաս նական համակարգ: Նախևառաջ, երկու երկրներն էլ գտնվում են տնտեսական շրջափակման միջավայրում և ունեն առավել սուր պատերազմական սպառնալիքներ, որոնք լրացուցիչ նախապայմաններ են առաջացնում պարենային անվտանգության առավել արդյունավետ կառավարման գծով՝ հատկապես արտակարգ իրավիճակներում: Բացի այդ, Իրանի Իսլամական Հանրապետությունն (ԻԻՀ) և Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) դասվում են տնտեսապես զարգացող երկրների շարքին և ունեն նույնատիպ ագրոպարենային զարգացման համակարգային խնդիրներ՝ խելացի գյուղատնտեսության կազմակերպման, պարենային համակարգի թվային կառավարման փոխակերպման, ագրոբիզնեսի կայուն զարգացման գծով: Ուստի, պարենային ապահովման կառավարման մի շարք հիմնահարցեր համընդհանուր են այս երկու երկրների համար և ոլորտային համագործակցության հնարավորություններ են ստեղծում: Սակայն, դեռևս լոգիստիկ արժեշխթաների բացակայությունը, ինչպես նաև պարենամթերքի արտադրման և իրացման էկոհամակարգերով փոխլրացնող բացակայությունը ԻԻՀ-ի և ՀՀ-ի միջև խոչընդոտներ են ստեղծում պարենային անվտանգության համակարգային կառավարման ոլորտում: Այս առումով, կարևորվում է երկու երկրների պարենային հաշ վեկշիռների ներդաշանկեցումը, սննդամթերքների արտադրման փոխ լրացումները, ագրոարդյունաբերական համալիրների համագործակցությունը, որոնք համակարգային կառավարման կարիք ունեն: Հետևաբար, նաև իրենց լուծումներին են սպասում այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են պարենային անվտանգության կառավարման նպատակադրումների հստակեցումն ու կառավարչական որոշումների արդյունավետության գնահատումը տարբեր շահառուների կողմից, ինչն էլ նախորոշել է գիտական հետազոտության նպատակը և ատենախոսության առջև դրված խնդիրները:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է կատարել առաջարկություններ երկրների համագործակցության համատեքստում պարենային անվտանգության կառավարման համակարգի կատարելագործման ուղղությամբ:

Ելնելով նպատակից, հետազոտության խնդիրներն են հանդիսացել՝

- Ուսումնասիրել Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման ոլորտի խնդիրները,

- ելնելով Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման համանման խնդիրներից, մշակել անվտանգային ոլորտում երկրների համագործակցային կառավարման շրջանակ,
- մշակել պարենային անվտանգության ապահվման սպառնալիքների աստիճանակարգ, նպատակ ունենալով հստակեցնելու կառավարման ուղղությունները վերազգային, ազգային և լոկալ մակարդակներով,
- առաջարկել անվտանգության կառավարման նպատակադրումների ցուցիչներ, նպաստելով պարենի ապահովման և հասանելիության, ինչպես նաև պարենամթերքի սպառման մշակույթի բարելավման գծով արդյունավետ կառավարչական որոշումների կայացմանը,
- ներկայացնել պարենային անվտանգության ապահովման շահառուների շրջանակ, նրանում արտացոլելով կառավարչական առաջընթացի ցուցիչներն ըստ շահառուների առանձին խմբերի,
- առաջարկել կառավարման շրջափուլային մոտեցում՝ հնարավորություն ստեղծելով կայացնելու անվտանգային սպառնալիքների կանխարգելման կառավարչական որոշումներ,
- մշակել պարենային անվտանգության կառավարման մոտեցումներ, որոնք հնարավորության կընձեռնեն պարբերաբար իրականացնելու անվտանգային ապահովման ներուժի վերաարժևորում՝ երկրների համագործակցության համատեքստում:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության նորույթը՝ երկրների համագործակցության համատեքստում պարենային անվտանգության կառավարման բարելավման առաջարկությունների ներկայացումն է: Մասնավորապես՝

- բացահայտվել են Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման ընդհանրական խնդիրները և դրա հիման վրա ներկայացվել է այդ ոլորտում երկրների համագործակցային կառավարման շրջանակ,
- առաջարկվել է պարենային անվտանգության ապահվման սպառնալիքների աստիճանակարգ, որի արդյունքում հստակեցվում են կառավարման նպատակադրումներն ու դրանց հասանելիության թիրախային վերջնարդյունքները՝ վերազգային, ազգային և լոկալ մակարդակներով,

- մշակվել են պարենային անվտանգության կառավարման նպատակադրումների ցուցիչներ, որով հնարավորություն է ստեղծվում պարենի ապահովման և հասանելիության, ինչպես նաև պարենամթերքի սպառման մշակույթի բարելավման գծով կառավարչական որոշումներ կայացումը՝ ըստ շահառուների տարբեր խմբերի,
- առաջարկվել է կառավարման շրջափուլային մոտեցում, որը հնարավորություն է ընձեռնում կայացնելու անվտանգային սպառնալիքների կանխարգելման կառավարչական որոշումներ և պարբերաբար իրականացնելու պարենային անվտանգության ապահովման ներուժի վերաարժևորում՝ երկրների համագործակցու թյան համատեքստում:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակները և խնդիրները, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպված են ստացված գիտական արդյունքները և նորույթը, ինչպես նաև դրանց գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Պարենային անվտանգություն, սահմանումներ և տեսական հիմքեր»** գլխում, քննարկվում են երկրների համագործակցության համատեքստում պարենային անվտանգության տեսական մոտեցումները: Մասնավորապես, մեկնաբանվում են միջազ գային կազմակերպությունների կարգաբերումները պարենային անվտանգության ոլորտում, ներկայացվում են տարբեր երկրների հաջողված դեպքերը պարենային անվտանգության համատեղ ապա հովման ոլորտում:

Ատենախոսության երկրորդ՝ **«Իրան-Հայաստան պարենային անվտանգության սպառնալիքների բացահայտումներ»** գլխում, համեմատական վերլուծության են ենթարկվում երկու հարևան երկրների ագրոարդյունաբերության զարգացման նույնատիպ մարտահրավեր ները և առաջարկներ են արվում դրանց համատեղ լուծումների ուղղությամբ:

Ատենախոսության երրորդ՝ **«Պարենային անվտանգության կառավարման հիմնախնդիրները երկրների համագործակցության համատեքստում»** գլխում, քննարկվում են ռազմավարական մասնակցային կառավարման մոտեցումներ: Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ, որոնք ամփոփված են ատենախոսության ***«Եզրակացություններ»*** բաժնում:

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Ատենախոսությունում բավարար հիմնավորված չէ պարենային անվտանգության համատեղ կառավարման տնտեսական արդյունավետությունը, մասնավորապես. չեն գնահատվել ՀՀ-ի համար ռազմավարական նշանակություն ունեցող հացահատիկի ներմուծման և Իրանի համար կարևորություն ունեցող որևէ մթերքի՝ ՀՀ-ից արտահանման տնտեսական հետևանքները:
2. Աշխատանքում առկա են ուսումնասիրվող ժամանակահատվածների անհամադրելիություն, մասնավորապես. որոշ աղյուսակների հետազոտության ժամանակահատվածը սահմանափակված է միայն մեկ տարով, օրինակ՝ աղյուսակ 1.3.1, 2.1.5, 2.2.1 և այլն: Ընդ որում, մի տեղ ներկայացված է 2020թ, մյուսում 2022թ, իսկ մի այլ տեղ էլ՝ 2024թ. տվյալներ:
3. Աշխատանքում կիրառված են հնացած տվյալներ (օրինակ՝ 14-րդ էջում Գլոբալ սովի ինդեքսը ներկայացված է 2017թ. դրությամբ, իսկ 44-րդ էջում և աղյուսակ 2.1.5-ում՝ 2019-2020թթ. ցուցանիշներ):
4. Նկատվում են տվյալների փաստացի անճշտություններ. օրինակ՝ էջ 34-ում և 44-ում ՀՀ ֆերմերային տնտեսությունների քանակը նշվում է 317.000, իսկ 47-րդ էջում այն դառնում է 335.000՝ առանց պատճառների մեկնաբանման կամ աղբյուրների տարբերության քննարկման: Կոնկրետ թվական տվյալների և մեջբերումների ու մտքերի դեպքում բացակայում են աղբյուրները: Որոշ պնդումներ և թվական ցուցանիշներ ներկայացված են առանց հղումների (էջ 18՝ համատեղ պարենի արտադրության օրինակներ, էջ 30, 33, 44՝ վիճակագրական տվյալներ, էջ 96-97՝ Իրանի ագրարային կրթության պատմություն), ինչը անհնարին է դարձնում դրանց հավաստիության ստուգումը:
5. Պարենի տեսակների վիճահարույց դասակարգում. Աղյուսակ 1.3.1-ում որպես հիմնական պարեն ընդգրկված են լոլիկն ու կաղամբը, սակայն ցանկից դուրս են մնացել այնպիսի մթերքներ, ինչպիսիք են կաթը, թռչնամիսը, բուսական յուղը և այլն:
6. Ներկայացված որոշ աղյուսակներում թվային տվյալները տարբերվում են պաշտոնական տվյալներից, մասնավորապես՝ աղյուսակ 1.3.1.-ի որոշ ցուցանիշներ չեն համընկնում պաշտոնական տվյալների հետ, աղյուսակ 1.3.2-ում առկա է տեխնիկական բացթողում, այն է՝ բացակայում են թվական տվյալները, աղյուսակ 2.1.5 վերնագիրը և բովանդակությունը չեն

համապատասխանում, բացի այդ ներկայացված է միայն մեկ տարվա ցուցանիշ, որը ևս տարբերվում է պաշտոնական հրապարակման տվյալից:

- Աշխատանքում առկա են գծապատկերներ ու աղյուսակներ, որոնք հետազոտվող թեմային այնքան էլ չեն վերաբերում: Օրինակ, էջ 41-ում ներկայացված ՀՆԱ-ի դինամիկան, որը, սակայն, տեղին չէ: Դրա փոխարեն կարելի էր գոնե ներկայացնել թեմային առնչվող Գյուղատնտեսական համախառն արտադրանքի դինամիկան, կամ էջ 43-44 ում ներկայված են արտահանման ու ներմուծման ուղղությունների կառուցվածքը, որի փոխարեն, ցանկալի կլիներ դիտարկել պարենամթերքի արտահանման-ներմուծման կառուցվածքը, այնուհետև հետազոտությունը խորացնել Հայատան-Իրան ուղղությամբ՝ ըստ պարենամթերքի տեսակների: Աշխատանքի էջ 72-ում ներկայացված են Իրանի աշխատանքային շուկայի ցուցանիշները, սակայն հիմնավորված չի, թե դրանց վերլուծությունն ինչ է տվել թեմային և այլն:

7. 1.3 ենթագլուխը վերնագրված է «ՀՀ և Իրանի պարենային անվտանգության ռազմավարությունը», սակայն Իրանին վերաբերող հատվածը սահմանափակվում է գլխի վերջում ընդամենը մեկ պարբերությամբ՝ մակերեսային նկարագրությամբ:
8. Աշխատանքի ենթագլուխներն ավարտվում են կտրուկ, առանց ամփոփիչ մասի, որտեղ պետք է ներկայացվեին տվյալ բաժինների շրջանակներում ստացված հիմնական գիտական եզրահանգումները:
9. Ներկայացված առաջարկությունները խիստ ընդհանրական են: Եզրակացություններում հեղինակն առաջարկում է մեծամասշտաբ նախագծեր (համատեղ բանկ, բորսա, հատուկ երկաթուղի, լքված շենքերի վերածում ֆերմաների)՝ առանց դրանց տնտեսական արդյունավետության, ծախսերի և իրագործելիության մասնագիտական հաշվարկների հիմնավորման:
10. Աշխատանքը հիմնականում կրում է պատմողական և նկարագրական բնույթ, օրինակ՝ 3.1 գլխում պարզապես թվարկվում են տարբեր միջազգային կորպորացիաներ՝ Cargill, Bayer և այլն:
11. Չնայած ՀՀ և ԻԻՀ պարենային ապահովվածության վերաբերյալ ծավալուն վիճակագրությանը, բավարար կերպով չեն քննարկվել պարենի ֆիզիկական ու տնտեսական մատչելիության վիճակը և ներմուծման փոխարինման հնարավորություններն ըստ պարենի առանձին տեսակների:
12. Աշխատանքն ավելի կշահեր, եթե, օրինակ 3.3 ենթագլխում առաջարկվող «Արտաքին խոցելիության ինդեքսի» (EVI) համար ներկայացված բանաձևից և դրան հաջորդող թվային ցուցանիշներից (Աղյուսակ 3.3.2) հետո ներկայացվեր որևէ մաթեմատիկական հաշվարկ:

13. Աշխատանքում առկա են անհամապատասխան և սխալ վերնագրեր. Օրինակ 1.1 ենթագլխի վերնագիրն անհասկանալի է և պարունակում է ուղղագրական վրիպակներ: Երկրորդ գլխի անգլերեն վերնագիրը իմաստային և տրամաբանական առումով չի համապատասխանում սեղմագրում ներկայացված հայերեն տարբերակին: Գիտական շարադրանքում առկա են բազմաթիվ բացթողումներ՝ մանր տառասխալներից մինչև անհասկանալի մտքեր: Տեքստում առկա է վեբ-կայքերի հղումների (URL) ուղիղ և չֆորմատավորված տեղադրում փակագծերում (օրինակ՝ https://www.cargill.com.2023), ինչը հակասում է որևէ ընդունված ակադեմիական չափանիշի: Որոշ հատվածներ ուղղակիորեն կրկնօրինակում են կազմակերպությունների պաշտոնական կայքերի գովազդային տեքստերը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ալիրեզա Փարվիզ Ադկանիանի «Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության համագործակցության հեռանկարները պարենային անվտանգության կառավարման համակարգում» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն հետազոտություն, որն ուղղված է Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության կառավարման հիմնախնդիրների բացահայտմանը:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 8 (ութ) գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը և խնդիրներին:

Ալիրեզա Փարվիզ Ադկանիանի «Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության համագործակցության հեռանկարները պարենային անվտանգության կառավարման համակարգում» թեմայով ատենախոսությունը և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 8 (ութ) հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակը հրապարակային պաշտպանության ժամանակ վերոնշյալ դիտողությունները հիմնավոր մեկնաբանելու դեպքում արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (06.07.2026թ., արձանագրություն թիվ 10):

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ**
**ավագ գիտաշխատող,**
**տնտեսագիտության թեկնածու, դոցենտ** **Ա.Գ.Մատինյան**

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ**
**գիտաշխատող,**
**տնտեսագիտության թեկնածու** **Հ.Ս.Ասատրյան**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Մատինյանի և նույն ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Հ.Ասատրյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝*

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ**
**գիտ. քարտուղար,**
**տնտեսագիտության թեկնածու** **Ե.Ա. Հակոբյան**
**«06» հուլիսի, 2026թ.**

**Կ. Տ.**